ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի բնակչության ընդհանուր ժողովի

19.01.2017թ.
գ. Այգեկ

Ժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Աբրահամյան

քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար Գ. Սարգսյան

մասնակիցներ՝ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Վարազդատ Մկրտչյան,

համայնքի 22 բնակիչ:

Լսեցին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ղեկավարի 2016 թվականի նրկրորդ կիսամյակի հաշվետվությունը՝ բյուջեի կատարողականի և կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ. համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան/:

Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Ժողովի նախագահ՝ _____ Մ. Աբրահամյան

Ժողովի քարտուղար՝ _____ Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2016 թվականի երկրորդ կիսամյակի բյուջեի կատարողականը՝

2016 թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտները առ 30.12.2016թ. 7625,3 հազար դրամ է, որը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմում է 100,8%:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
1	հողի հարկ	1870.0		1843,0	98,5
2	գույքահարկ շենք,շինությունների	4370,8		4405,5	100,8
3	տեղական տուրքեր	198,0		228,0	115,1
4	վարձակալական վճար	428,3		428,3	100,0
5	տեղական վճարներ	700,0		719,2	102,7
6	դոտացիա	26770,4		26770,4	100,0
7	տարեսկզբի ազատ մնացորդ	2085,3		2085,3	
	ԸՆԴԱՄԵՆԸ	36422,8		36481,0	100,1

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ

	Ծախսերի տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
1	կառավարման ապարատ	17111,8		15650,1	91,4
2	նախադպրոցական կրթություն	10900,0		10900,0	100,0
3	մշակույթ, սպորտ, կրոն	4560,0		4012,7	88,0
4	աղբահանություն	1584,0		1430,0	90,3
5	սոց.ծրագրեր	1390,0		1300,0	93,5
6	գյուղատնտեսություն	877,0		813,6	92,8
	ԸՆԴԱՄԵՆԸ	36422,8		34106,4	93,6

5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
6. Բյուջեի միջոցներով գնվել և մատուցվել են հետևյալ ապրանքներն ու ծառայությունները՝

   1) Այգեկի մանկապարտեզից դպրոց հաճախող 32 երեխաների համար գնվել են նվերներ՝ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ ընդամենը՝ 222 400 դրամ արժողությամբ:

   2) Այգեկ համայնքի 2016 թվականի բյուջեից տրամադրվել է դրամական օգնություն՝ ընդամենը 615 000 դրամ՝ համայնքի անապահով ընտանիքներին:
7. «Հայաստան» համահայկական հիմնադրամին ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն՝ 30 000 դրամ գումարով:
8. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար համայնքապետարանի աշխատակիցների նկատմամբ կիրառվել է խրախուսում՝ ընդամենը՝ 929 500 դրամ:
9. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը գործուղվել է Արմավիրի մարզպետարան՝ մասնակցելու համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին:
10. Պատվիրվել է համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման նախահաշիվ՝ 397 000 դրամ գումարով:
11. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:
12. Աշխատավարձի և պարտադիր սոց. վճարների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. *Համայնքային ճանապարհների վերանորոգում*
2. *Գերեզմանատան ցանկապատում:*
3. *Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում:*
4. *Փողոցների լուսավորության անցկացում:*
5. *Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում*
6. *Գրադարանի կոմետիկ վերանորոգում*

Այգեկ համայնքի ղեկավար՝ _____ Վ. Աբրահամյան

2017 թվականի հունվարի 19
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ գ. Այգեկ